Հաստատում եմ՝

Գործնական Հոգեբանության և
Սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի
Ռեկտոր՝ Ս. Մեղրակյան
« 2024թ. (փետրվարի արձ.№ 3) »

ԿԱՐԳ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՈՒՐԱՐՏՈՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄԱՆ

1. Սույն կարգը կարգավորում է մասնագիտությունների ուսումնական պլաններում ներառված բոլոր առարկաների համար ծրագրի կազման բովանդակության, կառուցվածքի, լրացման հետ կապված հարցերը:
2. Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի Ուրարտու համալսարանի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլաններում ներառված դասընթացների առարկայական ծրագրերը կազմվում են ըստ N1 Հավելվածի:
3. Առարկայական ծրագրի կառուցվածքը ներառում է առարկայի նպատակը և բովանդակությունը, որը պետք է համապատասխանի մասնագիտությունների ուսումնական պլաններին և պետական կրթական չափորոշիչներին:
4. Առարկայական ծրագիր մշակելիս և կազմելիս անհրաժեշտ է դրանում հստակ արտացոլել հետևյալ կետերը.
   1) Դասընթացի կարգավիճակի նկարագրությունը ըստ մասնագիտության,
   2) Դասընթացի տրամաբանական և բովանդակային փոխկապակցվածությունը այլ դասընթացների հետ,
   3) Դասընթացի համառոտ նկարագիրը
   4) Դասընթացի նպատակը,
   5) Դասընթացի կրթական վերջնարդյունքները
   6) Դասընթացի ձևավորած մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքներըգնահատման ձևերն ու չափանիշները,
   7) Դասընթացի գրականության ցանկը,
   8) Դասընթացի ծավալը և ուսումնական աշխատանքների տեսակները:

5. **Դասընթացի կարգավիճակի նկարագրությունը ըստ մասնագիտության**: Անհրաժեշտ է նշել, թե տվյալ առարկան ուսումնական պլանի որ կրթամասին է պատկանում (հումանիտար, սոցիալ-տնտեսական, բնագիտա-մաթեմատիկական, ընդհանուր մասնագիտական, հատուկ մասնագիտական):
6. **Դասընթացի այլ դասընթացների հետ տրամաբանական և բովանդակային փոխկապակցվածությունը** շարադրելիս անհրաժեշտ է թվարկել այն դասընթացները, որոնք մասնագիտության ուսումնական պլանի կառուցվածքում տվյալ առարկայի ուսումնասիրման համար հանդիսանում են բովանդակության և մասնագիտական ունակությունների ձեռք բերման առումով: Առաջին կուրսում դասավանդվող որոշ առարկաների համար նպատակահարմար է նշել նրանց կապը դպրոցի ավագ դասարաններում ուսումնասիրվող առարկաների հետ: Հաջորդ քայլով անհրաժեշտ է թվարկել պահանջները՝ – նախնական գիտելիքներ, – նախնական կարողություններ, – ուսանողի անձնական որակավորումները տվյալ առարկան ուսումնասիրելու համար՝ դասընթացների ուսումնասիրության արդյունքում ձևավորված ունակությունների հիման վրա:
7. **Դասընթացի համառոտ նկարագրում** ներկայացվում են ելնելով դասընթացի համար նախատեսված ժամաքանակից, հաշվի առնելով հատկացվող կրեդիտները և դրա բաղադրիչները: Դասընթացին հատկացվող ժամաքանակը (դասախոսություն, լաբորատոր, ինքնուրույն աշխատանք և

այլն) նախատեսվում է մասնագիտության ուսումնական պլանում, որին համապատասխան պետք է կազմվի դասընթացի ծրագիրը:

8. **Առարկայի նպատակը** նկարագրելիս անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ առարկայի դերը և առանձնահատկությունները տվյալ մասնագիտությամբ մասնագետ պատրաստելու և մասնագիտական հմտությունների ու կարողությունների ձևավորման գործում:

9. **Դասընթացի կրթական վերջնարդյունքները** նշվում են առարկայի յուրացման արդյունքում ուսանողի կողմից ձեռք բերված բոլոր ունակությունները: Անհրաժեշտ է ձևակերպել տվյալ առարկայի յուրացան արդյունքների վրա դրվող պահանջները (առարկայի ուսումնասիրության վերջում ուսանողը պետք է իմանա, կարողանա, տիրապետի): Առարկայի յուրացման արդյունքների վրա դրվող պահանջների ձևակերպումը ամբողջ ծրագրի գլխավոր բաղադրիչն է: Մի կողմից այն անրադառնում է առարկայի նպատակին և խնդիրներին, մյուս կողմից՝ կանխորոշում է ուսունական գործընթացում օգտագործվող կրթական տեխնոլոգիաները, դասընթացների տեսակները, ընթացիկ ստուգումները և ատեստավորման ձևերը: Առարկայի յուրացման արդյունքների վրա դրվող պահանջներն ձևակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ առարկայի իմացության արդյունքները համապատասխանեն առարկայի նշանակությանը տվյալ մասնագիտությամբ մասնագետներ պատրաստելու գործընթացում և պատասխանեն < գիտենալ>, <կարողանալ>, <տիրապետել> հարցերին:

10. **Դասընթացի գրականության ցանկը** նկարագրելիս դասակարգվում են հիմնական և լրացուցիչ գրականություն, – Գրականության էլեկտրոնային բազա և այլն: Հիմնական գրականության ցանկը ներառում է ուսումնական գրականություն, որն անհրաժեշտ և բավարար է առարկայի հիմնական բովանդակությունը ուսանողի կողմից յուրացման համար: Լրացուցիչ գրականությունը թույլ է տալիս ավելի լայն ուսումնասիրել տվյալ առարկան:

11. **Դասընթացի ծավալը և ուսումնական աշխատանքների տեսակները**

1) **Դասախոսությունը** դասընթացի կազմակերպման ձև է, որը նախատեսված է բանավոր ձևով մեծ ծավալի ուսումնական նյութի համակարգված և հաջորդական ներկայացման համար:

2) **Գործնական պարապմունքները** առարկայի ուսուցման ձև է, որն ուղղված է ուսանողի մոտ կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Ընդ որում ուսանողի մոտ ձևավորվում է սեփական տեսակետ առարկայի և նրա մեջ մտնող թեմաների վերաբերյալ:

3) **Ինքնուրույն աշխատանքը** արտալսարանային ուսումնական գործընթաց է, որն ուղղված է ուսանողի պատրաստվածությանը դասախոսությանը, գործնական պարապմունքներին և սեմինարներին, ուսումնահետազոտական նախագծերի և կուրսային աշխատանքների կատարմանը, ինչպես նաև այլ ուսումնական առաջադրանքների կատարմանը:

4) **Անհատական աշխատանքը** լսարանային նյութի լրացումն է ռեֆերատների, կուրսային նախագծերի (աշխատանքների), զեկուցումների, ուսումնահետազոտական աշխատանքների տեսքով:

12. **Ընթացիկ ստուգումը** ուսանողների կողմից գիտելիքների և կարողությունների ընկալման մակարդակի անընդհատ ստուգումն է դասախոսությունների, գործնական պարապմունքների, ինքնուրույն աշխատանքի ժամանակ և այլն: Ճիշտ կազմակերպվող ընթացիկ ստուգումները թույլ են տալիս հաստատել հետադարձ կապ ուսանողի հետ և ստուգել նրա ընկալման մակարդակը:

Ատեստավորումը ընդանրացնող ստուգում է՝ դասընթացի յուրացման արդյունքների հիման վրա, որը իրականանում է ստուգարքի կամ քննության տեսքով: 2

13. **Ընթացիկ և վերջնական ստուգումների ձևերն են՝**

– անհատական և խմբային առաջադրանքների կատարում սեմինարների և գործնական պարապմունքների ընթացքում,

– ստուգողական աշխատանքների կատարում,

– ռեֆերատների պատրաստում,

– հանձնարարված ընթացիկ նյութերի պատրաստում,

– հարցումներ (բանավոր կամ գրավոր),

– թեստավորում,

– ստուգարք,

– քննություն,

– անհատական հարցազրույց:

Հավելված 1

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ «ՈՒՐԱՐՏՈՒ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատված է

«____» _____ 2024թ.

N____ ամբիոնի նիստում՝

_____ ամբիոնի վարիչ՝ _____

Կատարող՝ _____

1.	Դասընթացի անվանում	
2.	Դասընթացի տեսակ	
3.	Կրթական մակարդակ	
4.	Ուսուցման ձև	
5.	Մասնագիտություն	
6.	Մասնագիտացում	
7.	Ամբիոն	
8.	Ուս.տարի/կիսամյակ	

9. Դասախոսի տվյալներ	
Դասախոսի ԱԱՀ	
Գիտական կոչում, աստիճան	
Կոնտակտային տվյալներ /էլփոստ, հեռախոս/	

10. *Դասընթացի մուտքային պայմանները*

-Ի՞նչ գիտելիքներ պետք է ունենա ուսանողը

11. Դասընթացի համառոտ նկարագիրը

- ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ – ECTS / ժամ/
- ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԺԱՄ –
- ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ –
- ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ –
- ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔ –
- ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄ –

12. Դասընթացի նպատակը

-Ինչո՞ւ ուսումնասիրել այս դասընթացը

13. Դասընթացի կրթական վերջնարդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Կկարողանա

Կիմաև

Կտիրապետի

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Ուսանողը.

Կկարողանա

Կիմաև

Կտիրապետի

14. Դասընթացը ձևավորում է մասնագիտական կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները

-Մասնագիտական կրթական ծրագրի համառոտագրից բերված հատված

15. Գնահատման ձևերը և չափանիշները

Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու»համալսարանի ուսանողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ստուգման և գնահատման կարգին համապատասխան

Գնահատման բաղադրիչի անվանումը	միավոր	Այլ նշումներ Բանավոր/ գրավոր
1. Հաճախում	10	ԲԱՆԱՎՈՐ
2. Ակտիվություն սեմինար, գործնական աշխատանքներին	15	ԲԱՆԱՎՈՐ
3. Աշխատանք տեսական գրականության հետ/հետազոտություն	20	ԳՐԱՎՈՐ
4. Ինքնուրույն աշխատանք /ռեֆերատ, հանձնարարություն/	15	ԳՐԱՎՈՐ

16. Դասընթացի օգտագործվող գրականություն

17. Թեմատիկ պլան

Հ/հ	Թեմայի անվանումը /ՆՊԱՏԱԿԸ/	Թեմային հատկացվող ժամեր			Առաջադրանք և գրականություն* /*գրքի կամ ամսագրի անվանումը, հրատարակչությունը, թիվը, թեմային վերաբերող էջը/
		Դաս.	Գործ.	Ինքն.	
1.					
2.					
3.					
4.					
5.					
6.					
Ընդամենը՝					

18. Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին ուսանողը կատարում է ...:

19. **Կցել հարցաշարերը**